



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Մտեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

616
Ռ-74

ՊՐՈՖ. Դ. ՌՈՍՍԻՅՍԿԻՅ



Մ Ի Զ Ա Տ Ն Ե Ր Ը

Յ Ե Վ

ՎԱՐԱԿԻՉ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ



ԽՍՀՄ ԺՈՂՈՎՈՐԴԻ. ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ
ՄՈՍԿՎԱ

1931

11 7 1932 2314

4917

616

Ռ-74

այ

29 JUL 2010

ՊՐՈՖ. Դ. ՌՈՍՍԻՅԱՆԻՅ

Մ Ի Զ Ա Տ Ն Ե Ր Ը

Յ Ե Վ

ՎԱՐԱԿԻՉ ԶԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1007
33843

Թարգմ. Հ. Կ.

1. ՎԱՐԱԿԻՉ ՇԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՅԵՎ ԻՆՉՊԵՍ ԵՆ ՆՐԱՆՔ ՏԱՐԱԾՎՈՒՄ

Մարդու ամենասոսկալի թշնամիներին են վարակիչ կամ ինֆեկցիոն հիվանդությունները, վորոնք հնագույն ժամանակներից մինչև որս վոչնչացնում են մեծ քանակությամբ մարդկային կյանքեր:

Պատմությունից հայտնի յե, վոր բնությունն ունիսկ ամենաահավոր յերևույթները, ինչպես, որինսակ, հրաբուխների ժայթույթները, յերկրաշարժները և հեղեղումները մարդկության համար պակաս կործանիչ են լինում, քան վարակիչ հիվանդությունները: Յերբեմն վարակիչ հիվանդությունների համաճարակները՝ այս կամ այն յերկրում տարածվելով և իրենց հետ մահացություն և աղքատություն բերելով՝ յերկար ժամանակով ընդհատում են կուլտուրայի զարգացումը և ժողովրդական մասանների բարեկեցությունը:

Նույնիսկ ամենակատաղի և արյունալից պատերազմները այնքան զոհեր չեն առաջացնում, վորքան վարակիչ հիվանդությունների համաճարակները, և պատերազմների ժամանակ սովորաբար ավելի մարդ ե մեռնում վարակիչ հիվանդություններից, քան զենքից և հեղձուցիչ գազերից:

Վորպեսզի վարակիչ հիվանդությունները չկարողանան լայն կերպով տարածվել, անհրաժեշտ ե, վոր ամեն մեկը իմանա, թե ինչից են առաջանում այդ հիվանդությունները, ինչ կերպ են նրանք տարածվում և ինչպես կարելի յե պահպանվել վարակվելուց: Զգուշության միջոցները պահպանելով (մեծ մասամբ շատ հասարակ միջոցներ, վորոնք

մեծ ծախսումներ և ժամանակի աչքի ընկնող ծախք չեն պահանջում) կարելի չե սեփական կյանքն և առողջութիւնը պահպանել և ազատվել շատ կորուստներից, վորոնք կապված են յերկարատե հիվանդութեան հետ:

Ի՞նչ են, իսկապէս, ներկայացնում վարակիչ հիվանդութիւնները և ինչից են նրանք առաջանում:

Վարակիչ հիվանդութիւնները առաջացնում են մանրագույն կենդանի արարածները, այսպէս կոչած միկրոբները կամ բակտերիաները:

Նրանց կարելի չե տեսնել միմիայն հատուկ գործիքի միջոցով, վոր կոչվում ե միկրոսկոպ. միկրոսկոպի մեջ կան խոշորացույց ապակիներ, և այդ գործիքը ցույց ե տալիս մանրագույն առարկաները մի քանի հարյուր անգամ խոշորացրած դրութեամբ:

Գիտութիւնը ներկայումս արդեն հաստատ կերպով վորոշել ե, վոր ամեն տեղ կան մեծ քանակութեամբ միկրոբներ, վոր նրանք ապրում են և՛ ողի մեջ, և՛ ջրի մեջ, և՛ գետնի մեջ:

Միկրոբների մեջ կան այնպիսիները, վորոնք բացառապէս ապրում են բույսերի և կենդանի արարածների մեջ, նույն թիւում և մարդու մեջ: Կան այնպիսիները, վորոնք զարգանում են միայն դիակների և փթող բույսերի մեջ:

Միկրոբները՝ իրենց զարգացման համար բարենպաստ պայմանների մեջ ընկնելով (իսկ նրանց զարգացման համար զլխավորագույն պայմաններն են ջերմութիւնը և խոնավութիւնը՝ լույսի բացակայութեան հարընթացութեամբ) չափազանց շուտ են բազմանում: Կարճ ժամանակում՝ ուրիշակի համար մի ժամվա ընթացքում՝ մեկ միկրոբի տեղ կարող ե գոյանալ կես միլիոնից ավել:

Կան միկրոբներ, վոր մարդու համար անփնաս են, կան նույնիսկ ոգտակար միկրոբներ: Բայց միևնույն ժամանակ նրանց մեջ կան և չափազանց վտանգավորները առողջութեան և կյանքի համար, վորոնք առաջացնում են զանազան — շատ հաճախ — բավականին ծանր հիվանդութիւններ:

Ընկնելով մարդու մարմնի մեջ, հիվանդութիւններ առաջացնող միկրոբները սկսում են ապրել նրա մեջ և

անվել ի հաշիվ նրա հյութերի և արյան: Միկրոբները չափազանց շուտ են բազմանում և այդ պատճառով նրանք կարող են կարճ ժամանակում ներս թափանցել մարդկային մարմնի բոլոր մասերի մեջ և թունավորել մարմինը իրենց արտադրած թունավոր նյութերով:

Յերբ վարակիչ հիվանդութիւնները մանրամասնորեն ուսումնասիրվեցին, պարզվեց, վոր վարակիչ հիվանդութիւնների պատճառն են հանդիսանում զանազան միկրոբները:

Այդ միկրոբները մարդու մեջ են ընկնում կամ ջրի և անդի հետ, կամ ողի հետ միասին, կամ թե փասված մաշկի միջոցով:

Զանազան միկրոբները առաջացնում են զանազան հիվանդութիւններ: Այդ պատճառով միկրոբները կոչվում են կամ տիֆային, կամ խոլերային, կամ ժանտախտային, կամ տուբերկուլոզային (թոքախտային) և այլն:

Վարակիչ հիվանդութիւններ առաջացնող միկրոբները մարդուց մարդու վրա յեն անցնում զանազան յեղանակներով և ուղիներով:

Այդ պատճառով չափազանց կարևոր ե իմանալ վարակման բոլոր ձևերը: Միայն գիտենալով այդ, կարելի չե զգուշութեան միջոցներ ձեռք առնել նոր հիվանդութիւնների առաջացման դեմ:

Ի՞նչ ուղիներով են տարածվում վարակիչ հիվանդութիւնները:

Վարակի ամենագլխավոր աղբյուրն ե հիվանդ մարդը, վորովհետե նրա բոլոր արտադրութիւնների մեջ՝ կկղանքների, մեզի, խորխի, քթի լորձի մեջ միշտ լինում են անթիվ անհամար միկրոբներ:

Վարակի յերկրորդ աղբյուրն են հանդիսանում հիվանդի մոտ յեղած իրերը, անկողինը, սպիտակեղենը, զգեստը, զրքերը, սանրերը և այլն:

Այն շնքը, վորտեղ հիվանդն ե գտնվում, նույնպէս վարակված ե, վորովհետե վարակիչ հիվանդութիւններ առա-

Չացնող միկրոբները կարող են դառնալ և՛ հատակի վրա, և՛ պատերի վրա, և՛ ճեղքերում, և՛ կահկարասիքի վրա:

Միկրոբները կարող են ընկնել մարդու թոքերի մեջ նրա կողմից ներս շնչվող ոդի միջոցով: Այսպես է փոխադրվում գրիպը, կարմրուկը, կոկլյուշը (կապույտ հազը), թոքախտը և մի քանի այլ հիվանդություններ:

Աղտոտած սննդի և ջրի միջոցով վարակվում են խոլերայով, վոլբովայնային տիֆով և արնալուծով:

Հաճախ վարակիչ հիվանդությունը փոխադրվում է մեր մարմնի վրա յեղած քերվածքի, չանդովածքի կամ վերքի միջոցով: Այդ կերպ է առաջանում սիբիրախտով, կարմիր քաժով, սիֆիլիսով և կատաղությամբ հիվանդացումը, վերջինս կատաղած կենդանիների կծելու դեպքում:

Դիֆտերիաով, կարմրուկով և քութեշով հիվանդներին և դրանցից մեռածներին համբուրելիս, հաճախ վարակվում են այդ հիվանդություններով:

Բացի այդ՝ գիտությունը լիովին ճշտորեն հաստատել է, վոր միկրոբները մարդուն կարող են անցնել նույնպես և զանազան միջատներից կծվելու միջոցով: Վոջիլները, լվաները, փայտջիլները, ճանճերը և մոծակները վոչ միայն անհանդստացնող և զզվելի կենսակիցներ են մարդու համար, այլ և ծայր աստիճան վտանգավոր են, վորովհետև զանազան վարակիչ հիվանդություններ առաջացնող միկրոբներ են փոխադրում:

Այս գրքույկի մեջ մենք կխոսենք այն մասին, թե ինչ վտանգ են ներկայացնում վարակիչ հիվանդություններ տարածելու տեսակետից զանազան միջատները և ինչպիսի միջոցներ կան նրանց դեմ կռվելու համար:

II. ՃԱՆՃԵՐԸ, ՎՈՐՊԵՍ ՎԱՐԱԿԻՉ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՏԱՐԱԾՈՂՆԵՐ ՅԵՎ ՆՐԱՆՑ ԴԵՍ ԿՈՎԵԼՈՒ ՄԻՋՈՑՆԵՐԸ

Ստամոքսի և աղիքների հիվանդությունների ծագման մեջ, բացի սովորական վարակումից, վորը լինում է միկրոբներով վարակված խմելու ջուր գործածելուց, մեծ դեր են խաղում

ճանճերը, վորոնք մարդկանց և ուտելիղների վրա մեծ քանակությամբ ամեն տեսակ բակտերիաներ են փոխադրում, նույն թվում խոլերայի, վորովայնային տիֆի և արյունալուծի հարուցիչներ: Այդ վերաբերմամբ ճանճերը պահանջապես վտանգավոր են իրենց ահագին բազմաճյուղյան հետևանքով: Հայտնի յե, վոր ճանճերի եզերը նեխվող բուսական և կենդանական նյութերի վրա ամում են մինչև 100—120 ձու, իրենց կյանքի ընթացքում ձու ամելով չորս անգամ:

Ճանճերի մեծ քանակությունը ամառ ժամանակ անկասկած նպաստում է զանազան վարակիչ հիվանդությունների



Նկ. 1. Ճանճի մարմնի յերկարածիկ կտրվածքը:

տարածմանը, վորովհետև ճանճերը ամեն տեղ են լինում և նրանց վրա միշտ կարելի յե գտնել ամեն տեսակի բակտերիաներ մեծ քանակությամբ: Հաշվված է, վոր սովորական տնային ճանճը իր թաթիկների վրա և կնճիթով կրում է մոտ 5.000.000 բակտերիաներ, ըստ վորում նրանց բռնվելը ճանճի մարմնի վրա հեշտանում է նրանով, վոր ճանճի մարմինը և թաթիկները շատ տեղերում ծածկված են բարակ մազիկներով:

Մանավանդ վտանգավոր է այն վարակը, վոր ճանճերը փոխադրում են ուտեստի մթերքների միջոցներով, վորովհետև ճանճերի թաթիկների և կնճիթիկի կազմվածքը չափազանց հարմար է այդ մթերքների վրա նրանց կողմից վարակ մեխանիկորեն փոխադրելու համար:

Բացի վարակը ուղղակի կերպով մեխանիկորեն փոխադրելուց, ճանձերը վարակը տարածում են և այլ, ավելի բարդ կերպով: Նրանք միկրոօրգանիզմն են տալիս, միկրոօրգանիզմն են մարսողական անդամների մեջ, վորտեղ վոչ միայն չեն վոչնչանում, այլ և կարող են բազմանալ, և դուրս են գալիս ճանձի զկտորցի շնորհիվ, այլ և նրանց կղկղանքների հետ: Պարզված է, վոր ճանձերի կղկղանքների մեջ մեծ քանակությամբ պատանում են ամեն տեսակի և հաճախ ախտաբեր բակտերիաներ, վորովհետև ճանձերը սնվում են զանազան մնացորդներով, թոքախտավորների խորխով, տիֆով և խոլերայով հիվանդների կղկղանքով և այլն:

Ճանձի մարմնի վրա կան թևիկներ, կնձթիկ և թաթիկներ, վորոնց վրա գտնվում են բազմաթիվ շատ բարակ մազիկներ:

Զնայած, վոր ճանձերը շատ փոքր են, նրանց մարմինը բավականին բարդ ապարատ է կազմում կուլ տված սնունդը վերամշակելու համար: Ճանձը ունի բերան, խալիպ, վորը լայնանալով կարող է լցվել սննդի մեծ քանակությամբ: Ճանձը ունի նաև ստամոքս և աղիքներ:

Ճանձերի սիրած սնունդն են կազմում զանազան մնացորդները, նեխվող նյութեր, խորխ, մարդկային կղկղանքը և անասունների աղբը, և մանավանդ ձիերի աղբը: Իսկ բոլոր նեխվող նյութերի մեջ, զանազան մնացորդների մեջ, խորխի և կղկղանքների մեջ միշտ գտնվում են զանազան միկրոօրգանիզմներ:

Ճանձերի սիրած տեղերն են՝ արտաքնոցները, անասնոցները և աղբահորերը, այնտեղ՝ վորտեղ ճանձերը իրենց համար միշտ շատ սնունդ են գտնում:


Խնչպես ցույց են տվել դիտողությունները, ճանձերը բազմանում են անագին քանակությամբ:

Հաշված է, վոր ճանձի մի եզը տարվա ընթացքում կարող է ունենալ մինչև հինգ ու կես հազար միլիարդ սերունդ:

Սենյակի ճանձի ձվիկները սպիտակ գույնի յեն և ճանձերը նրանց ածում են ամբողջ կույտիկներով և ուղիղ

շարքերով: Մի հրվա ընթացքում ճանձը կարող է ածել 120-ից մինչև 150 ձվիկ: Ճանձերը առանձնապես գերադասում են իրենց ձվիկները ածել ձիու աղբի և մարդկային կղկղանքների մեջ: Բացի ձիու աղբից և մարդկային կղկղանքներից, սենյակի ճանձի թրթուռները կարող են ապրել նաև վոչխարների և խոզերի աղբի մեջ, տնային թռչունների թաց աղբի մեջ, թացության մեջ, նեխած մսի մեջ և աղբահորերում:

Տաք յեղանակին և բավականին խոնավության դեպքում արդեն 24-ժամից ճանձերի ձվիկներից թրթուռներ են դուրս գալիս, վորոնք այնուհետև դառնում են այսպես ասած բոժոժներ:



Նկ. 2. Ճանձի թաթիկները միկրոսկոպի տակ:

Ճանձերի ձվիկներ ածվելու ժամանակից մինչև բոժոժներից ճանձեր յերևալը անցնում է 8-ից մինչև 50 օր:

Լավ սնվելու դեպքում և տաք յեղանակին ճանձերի կյանքը տևում է 70 օրից ավել:

Խնչպես սովորական տնային ճանձը, նույնպես և ճանձերի այլ տեսակները հանդիսանում են շատ վարակիչ հիվանդութույնների տարածողներ:

Մանգալով զանազան տեսակի նեխվող նյութերի վրա՝ խորխի, ձիու աղբի, մարդկային կղկղանքների և զանազան մնացորդների վրա՝ ճանձերը իրենց թաթիկների միջոցով հավաքում են և նրանց վրա պահում զանազան միկրոօրգանիզմներ անագին քանակությամբ:

Սնվելով թոքախտավորների խորխով, տիֆով և խոլերայով հիվանդների ժայթույններով, ճանձերը կուլ են տալիս

մեծ քանակութեամբ միկրոբներ, վորոնք առաջացնում են այդ հիվանդութեանները: Իսկ կուլ տված միկրոբները, ընկնելով ճանճերի ստամոքսը և աղիքները, վոչ միայն չեն վռնչանում այնտեղ, այլ նույնիսկ կարող են բաղձանալ և պահպանվել յերկար ժամանակ (յերբեմն մինչև մեկ ամիս):

Ծծելով այն սնունդը, վորը իր մեջ պարունակում է զանազան՝ վարակիչ հիվանդութեաններ առաջացնող միկրոբներ, ճանճերը կարող են տարածել այդ միկրոբները իրենց կղկղանքների միջոցով: Իսկ ճանճերի մի քանի տեսակները կղկղում են մի որվա ընթացքում հիսուն անգամից ավել:

Մեղանից ամեն մեկը լավ գիտե, թե վորքան մեծ քանակութեամբ կղկղանքներ են (սև կետերի նման) թողնում ճանճերը այն զանազան առարկաների վրա, վորոնց վրա նստում են:

Բացի դրանից ճանճերը սիրում են — լցնելով իրենց խայիլ սնունդով, հաջախակի զգուտել: Ծանճերի զգուտոցի կաթիլներում անգլխական դիտնական Սմիթը հաճախ գտնում եր միկրոբներ վորոնք զանազան վարակիչ հիվանդութեաններ են առաջացնում:

Առանձնապես վտանգավոր է, յերբ ճանճերը վարակել փոխադրում են զանազան ուտելիղների միջոցով:

Ծանճը իր հետ վարակիչ հիվանդութեանների հարուցողներ ունենալով, կարող է նստել զանազան ուտելիղների վրա: Նստելով ուտելիքի վրա, նա կարող է թողնել իր թաթիկներին և կնճթիկին կպած միկրոբները կամ թե սնունդը վարակել իր զգայական կամ կղկղանքների միջոցով:

Իսկ ճանճերի միջոցով այդ կերպ վարակված սնունդի հետ միասին վարակիչ միկրոբները ընկնում են մարդու մեջ և կարող են առաջացնել յերկարատև ծանր հիվանդութեան:

Ինչպես ցույց են տվել դիտնականների դիտողութեանները, ճանճերը, բացի դրանից, թոքախտի, ժանդախտի, սիրելիախտի, դիֆտերիտի և բորոտութեան փոխադրողներ են հանդիսանում:

Սմիթը թոքախտ առաջացնող միկրոբներ է գտել ճանճերի կղկղանքների մեջ չորս որ անց այն որից, յերբ ճանճերը

ճերը սնվել են թոքախտավորի խորխով: Նույն դիտնականի դիտողութեանների համաձայն, ժանդախտի միկրոբներ կուլ տված ճանճերը 18 որվա ընթացքում արտադրում են այդ միկրոբներին իրենց կղկղանքների հետ միասին:

Առանձնապես հաճախ ճանճերը տարածում են խոլերա, վորովայնային տիֆ և արյունալուծ:

Այսպես, որինակ, իտալական բժիշկները Իտալիայում յեղած խոլերայի ժամանակ գտել են այն ճանճերի թաթիկների վրա, վոր թռչում էին խոլերայի հոսպիտալում, խոլերայի միկրոբներ, ինչպես և այն ճանճերի վրա, վորոնք բռնված են յեղել հոսպիտալի շրջակայքում: Խոլերային հոսպիտալի շուրջը թռչող ճանճերի փորոտիկում և կղկղանքներում, նույնպես գտել են մեծ քանակութեամբ խոլերայի միկրոբներ: Նմանապես և վորովայնային տիֆով և արյունալուծով հիվանդների շուրջը թռչող ճանճերի մոտ հաճախակի այդ հիվանդութեաններն առաջացնող միկրոբներ են գտնում:

Ամերիկական բժիշկ Գեվիտըրը գիտել է վորովայնային տիֆով ճանճերի միջոցով վարակվելու դեպքերից մեկը:

Ահա թե ինչ է պատմում նա:

«Մի աննշան քաղաքում հիվանդացել եր վորովայնային տիֆով կաթնեղենի խանութի տիրոջ կինը: Նա հիվանդացել եր ոգոստոսի սկզբին, տանը պառկել եր մոտավորապես յերեք շաբաթ՝ և միայն ոգոստոսի վերջին փոխադրվել եր հիվանդանոց: Սեպտեմբերի առաջին կեսի ընթացքում քաղաքում նկատվում էին վորովայնային տիֆով հիվանդանալու շատ դեպքեր: Հիվանդացածներին հարցաքննելու ժամանակ պարզվեց, վոր բոլորն ել կաթ էին ստացել կաթնեղենի այն խանութից, վորտեղ գտնվելիս է յեղել խանութի տիրոջ վորովայնային տիֆով հիվանդացած կինը: Պարզվեց, վոր կաթնեղենի խանութի տերն ել հիվանդ է յեղել վորովայնային տիֆով, բայց շատ թեթև կերպով, այնպես վոր նա հիվանդութեանը անց է կացրել առանց անկողին մտնելու և հիվանդութեան ընթացքում կատարել է իր պարտականութեանները: Կաթնեղենի խանութի մեջ յեղած շուրջ լավորակ է յեղել և վորովայնային տիֆի միկրոբներով վարակված չի

յեղել: Իսկ արտաքնոցը գտնվել է խանութից վոչ հեռու և չի ծածկվել: Այդ պատճառով ճանճերը կարող եյին բոլորովին ազատ կերպով վորովայնային տիֆով վարակված կղկղանքներից թռչել և դիպչել կաթին և կաթնային այլ մթերքներին, վորոնք կային խանութում: Իհարկե, նրանք իրենց հետ փոխադրում եյին վորովայնային տիֆի միկրոբներ և նրանցով վարակում եյին կաթնամթերքները: Յերբ հետազոտեցին խանութում և նրա շուրջը յեղած ճանճերին, նրանց վրա գտան վորովայնային տիֆի միկրոբների մեծ քանակություն:

Շատ հետաքրքիր և նշեց, վոր ձմեռային քնաթաթախության մեջ ընկած ճանճերի միկրոբները, վորոնք վարակիչ հիվանդություններ են առաջացնում, յերկար ժամանակ կարող են կենդանի մնալ:

Վերջապես պարզվեց, վոր ճանճերը՝ շնորհիվ իրենց կնճճեթիկի կազմվածքի՝ կարող են ներս ընդունել վոչ միայն միկրոբներ, այլ և մի քանի վորդերի ձվաներ, և այդպիսով հանդիսանում են վորդային հիվանդացումների փոխադրիչներ:

Մարդկային բնակարանում նախ և առաջ յերևում է սովորական սենյակի ճանճը:

Նրա բերանը այնպես և, վոր նա կարող է միայն ծծել, բայց չի կարող վոչ կծել, վոչ էլ ծակել մարդու և կենդանիների մաշկը:

Ամառվա վերջը և աշնանը յերևում է մի այլ ճանճ, այսպես կոչված խայթող ճանճ, վորի բերանը, տարբերվելով առաջինի բերանից, հարմարեցրած է կծելու համար: Այդ ճանճը սնվում է մարդու և կենդանիների արյունով: Այդ յերկու տեսակի ճանճերը այնքան նման են իրար, վոր շատերը նույնիսկ չեն տարբերում նրանց, այլ կարծում են, թե սենյակի ճանճերը ամառը չեն խայթում, իսկ աշնանը չար են դառնում և սկսում են խայթել:

Տնային ճանճին կարելի չէ տարբերել խայթող ճանճից ի միջի այլոց նրանով, վոր առաջինը պատի վրա նստած է լինում սովորաբար գլխիվայր, իսկ վերջինը — գլխով դեպի վերև:

Բացի նրանից, վոր խայթող ճանճը կարող է սովորական տնային ճանճի պես վարակ փոխադրել, այսինքն իր թաթիկների, կնճճեթիկի, կղկղանքի և աղիքային արտադրությունների միջոցով, նաև կարող է կծելիս հիվանդին պատվաստել այնպիսի հիվանդություններ, ինչպես բժավոր և հետադարձ տիֆ, ժանտախտ, քութեշ և այլն:

Կան նաև այսպես կոչված կենդանածին ճանճեր, — մոխրագույն՝ մսի և վոյլֆարտյան ճանճ, վորոնք իրենց թրթուռները թողնում են վոչ միայն կենդանիների դիակներին վրա, այլ և վերքերի, և մարդկանց ու կենդանիներին քթի և բերանի խորշերի մեջ: Այդ ճանճերի թրթուռները խոցեր են առաջացնում, յեղած վերքերը մեծանում են, խորանում են և պատճառում են ավելի ևս սարսափելի տանջանքներ, խոցոտելով այն տեղերը, վորոնց վրա ընկած են յեղել այդ թրթուռները, և կազմալուծելով մարմնի վոչ միայն կակուղ մասերը, այլ և վոսկոբները: Քթից և ականջներից թրթուռները հաճախակի ընկնում են դանդի խորշերը և առաջացնում են անտանելի գլխացավեր, սանդանքներ, յերբեմն խոսկալիորուստ և լսողության կորուստ, վերջիվերջո նույնիսկ մահ:

Ինչպևս պետք է կովել ճանճերի դեմ:

Կարելի չէ ասել, վոր ճանճերի դեմ կովելու գլխավոր միջոցներն են մաքրությունը և այն շենքի, վորի մեջ մարդ է ապրում, կարգին պահելը:

Ճանճերի դեմ կովելու միջոցները ուղղված պետք է լինեն հետևյալ նպատակներն՝ առաջին, վորպեսզի ճանճերը չգոյանան և չբազմանան, յերկրորդ՝ վորպեսզի ճանճերը չմոտենան մարդուն և այն իրերին, վորոնց հետ կապ ունի նա, մանավանդ ուտելիքներին, և վերջապես, վորպեսզի ճանճերը վոչնչանան:

Մաքրություն և կարգականություն — ահա ճանճերի գլխավորագույն թշնամիները: Այնտեղ, ուր կան նեխավող մնացորդների կույտեր, ախոռի աղբ, աղբահորերի և արտաքնոցների մոտ, կեղտոտ պահվող խոհանոցներում և սեղանատներում, — այնտեղ ճանճերը միշտ վիստում են:

Ճանճերի դեմ պայքարելիս միշտ հարկավոր ե ջանք գործադրել, վորպեսզի մարդկային բնակարանում լինեն հնարավորին չափ քիչ այնպիսի նյութեր, վորոնք կարող են կազմալուծվել և նեխվել: Այդպիսի նյութեր ճանճերը առանձնապես սիրում են և նրանց շուրջը հավաքվում են մեծ քանակությամբ: Այդ պատճառով հարկավոր է քննելուց հետո սենյակները անկարգ թողնել, հարկավոր ե ուշադիր կերպով հավաքել հացի փշրանքները և ուտելիքի մնացորդները թեյից, ճաշից և այլ տեսակի սննդառուծյունից հետո: Հարկավոր է նաև թողնել սեղաններն ու սփռոցները սնունդով կեղտոտած դրուծյան մեջ, անհրաժեշտ ե սեղաններն և ամանեղենները լվանալ ուտելիք պատրաստելուց և ուտելուց հետո: Անհրաժեշտ ե բնակարանից դուրս տանել ամեն տեսակի ուտելիքի մնացորդներ, չխնչել և չթքել հատակի վրա: Յեթե այդ բոլորը խստիվ կատարվի, ճանճերի համար բնակարան ձգտելու հրապուրիչ նյութ չի լինի:

Ճիշտ ե, յեթե բնակարանին կից լինեն այնպիսի տեղեր, վորտեղ ճանճերի համար հարմար ե բազմաճանալը, նրանք այնուամենայնիվ կթռչեն մարդու բնակարանի մեջ, բայց այդ բնակարանում մաքրության և կարգուկանոնի հանդիպելով, նրանք մշտապես այստեղ չեն մնա և դուրս կթռչեն:

Ինքնըստինքյան հասկանալի յե, վոր ներս թռչելով թեկուզ և կարճ ժամանակով մարդկային բնակարանը, նրանք այնուամենայնիվ կարող են փոխադրել վարակը (նստելով կամ ուտելիքների, կամ անմիջապես մարդու վրա): Այդ պատճառով անհրաժեշտ ե մտածել վոչ միայն բնակարանի մաքրության մասին, այլ հարկավոր ե բնակարանի շուրջը ևս խիստ մաքրություն պահպանել:

Յերբեմն մենք տեսնում ենք, վոր բնակարանների մոտերքը զանազան մնացորդներ հավաքելու տեղեր են սարքում՝ աղբի և աղտոտությունների հորեր, բաց արտաքնոցներ և այլն. իսկ յերբեմն անկարգության կամ ծուլության պատճառով մարդիկ դուրս են շարտում լուսամուտներից, հենց դռների մոտ, բնակարանների մուտքերի մոտ զանազան մնացորդներ: Այդ բոլորը մեծ չափով ճանճերի ուշա-

դրությունն ե գրավում: Այդ պատճառով, ով ուզում ե իրեն պահպանել ճանճերի միջոցով փոխադրվող զանազան վարակիչ հիվանդություններից, նա յերբեք չպիտի վոչ մի բան թափի կամ գցի իր բնակարանի մոտ: Զի կարելի աղբահորեր և աղտոտությունների փոսեր սարքել այն շինությունների մոտ, վորտեղ մարդիկ են ապրում: Նույնպես հարկավոր է բնակվել ախոռներին շատ մոտ, վորովհետև ախոռները այնպիսի տեղեր են, վորտեղ գոյանում են շատ ճանճեր:

Մանավանդ հարկավոր ե այդ կանոնները պահպանել գյուղերում, վորտեղ գյուղացիական խճիթները շատ հաճախ լցված են լինում հազարավոր ճանճերով, վորտեղ բոլոր մնացորդները դուրս են անվում հենց նույն փողոցում, իսկ խճիթին կից գտնվում ե անապուների բակը:

Բացի բնակարաններում խստագույն մաքրություն պահպանելուց, անհրաժեշտ ե նաև ամենախիստ մաքրություն պահպանել և այն տեղերում, ուր վաճառելու համար պատրաստվում են զանազան ուտելու մթերքներ, ամեն տեսակ հացեղենի խանութներում, հացթխարաններում, ուտելիքների կրպակներում, պանդոկներում, ճաշարաններում և այլ տեղերում: Այդ բոլոր տեղերում հարկավոր ե միջոցներ ձեռք առնել շենքերում ամենախիստ մաքրություն պահպանելու համար: Սննդամթերքները պիտի ծածկված պահվեն, վոչ մի փթող և անպետք մթերք չի կարելի պահել, հատակները, սեղանները և դարակները պետք ե հաճախ և լավ լվացվեն:

Յեթե պահպանվեն մաքրության և կարգապահության այդ բոլոր կանոնները, կարելի յե ասել, վոր ճանճերի դեմ պայքարելու գործում ամենագլխավորը արդեն արված ե:

Յեվ վորովհետև ճանճերը մեծ մասամբ բազմանում են զանազան մնացորդների և նեխվող նյութերի մեջ, ապա նրանց բազմացմանը խոչընդոտ ստեղծելու համար նախ և առաջ հարկավոր ե այդ մնացորդները բնակարանից դուրս տանել: Բացի դրանից, անհրաժեշտ ե աշխատել, վորպեսզի զանազան մնացորդները՝ թեկուզ և բնակարանից բավականաչափ հեռու թափվածները, վոչ միայն չգրավեն, այլ, բնդհակառակը, իրենցից քշեն ճանճերին: Դրա համար կան զանազան մի-

Ջոցներ, վորոնք փորձված են և լիովին հուսալի: Այդ միջոց-
ներէից ամենահարմարն և և ամենաեթանը — կերը: Կիր կա-
րելի յի թափել աղբի կույտերի վրա, աղբահորերի և աղ-
տափոսերի մեջ: Նույնպէս լավ, բայց դժբախտաբար թանգ
միջոց և կերոսինը, վոր կարելի յի ածել ձիու աղբի վրա,
վորի մեջ ճանճերը առանձնապէս շուտ են բազմանում:
Հարկավոր և նաև հիշել, վոր զանազան ընտանի թռչուն-
ները, և մանավանդ հավերը, ճանճերի թշնամիներն են:
Նրանք քրքրում են աղբը և աղտոտած գետինը, և ագահու-
թյամբ ուտում են ճանճերի թրթուռներին:

Քաղաքների աղբոտած թաղերում, ծայրամասերում և
գյուղերում, վորտեղ ահագին քանակությամբ ճանճեր կան,
շատ հաճախ մեծ ոգուտ և բերում մարմաշի կամ ցանցերի
գործածությունը լուսամուտների վրա: Այդ ունենալու դեպ-
քում ճանճերը վոչ մի կերպ չեն կարող բնակելի շէնքը
անցնել:

Զպիտի վախենալ, վոր ճանճերը, յերկոյան կթռչեն
սենյակը, նկատելով լուսավորությունը: Յերեկոները և
գիշերները ճանճերը քնում են և այդ ժամանակ լուսամուտ-
ները կարելի յի բոլորովին ազատել ցանցերից, յեթե միայն
մոտերքում չկան մոծակներ, վորոնք միշտ մեծ քանակու-
թյամբ թռչում են դեպի լուսավորությունը:

Իհարկե, այնտեղ, ուր բնակարաններում և նրանց կից
խստիվ մաքրություն և պահպանվում, կարիք չկա ցանցեր
սարքելու. այդ տեսակի ցանցերը այդ դեպքերում կարող են
գործածվել այն տեղերում, վորտեղ կերակուր և պատրաստ-
վում, այսինքն խոհանոցներում և սեղանատներում: Քաղաքի
աղտոտած թաղերում, ծայրամասերում և գյուղերում, վոր-
տեղ կան մեծ քանակությամբ ճանճեր, այդ տեսակ ցան-
ցերի գործադրությունը կարող և մեծ ոգուտ բերել:

Բացի բնակարանները ճանճերից պաշտպանելուց, չափա-
զանց կարևոր և նույնպէս նրանցից պաշտպանել ուտելու
մթերքները: Ուտելիղենը անհրաժեշտ և պաշտպանել ճանճե-
րից և՛ տնային պաշտպաններում, և՛ մանավանդ, խանութ-
ներում:

Ուտելիղենը պաշտպանելու համար հարկավոր և, վոր-
պեսզի այդ մթերքները պահվեն լավ կողավող պահարան-
ներում: Իսկ խանութներում, վորտեղ ուտելիղենը պետք և
յերևա, հարկավոր և ունենալ ապակե պատեր ունեցող՝ պա-
հարաններ: Այն դեպքում, յերբ ապակե պատեր ունեցող
պահարաններ չկան, ուտելիղենը կարելի յի ծածկել ցանցա-
վոր խուփերով, վորոնք պետք և լինեն, ամենից լավն է, մե-
տաղյա ցանցից: Իսկ ինչ վերաբերում և զանազան կտո-
րեղենից պատրաստված խուփերին (մարմաշից և շղարշից),
պետք և ասել, վոր նրանք պակաս հարմար են, քան մե-
տաղյա ցանցերը. կտորեղենից շինված խուփերը հեշտությամբ
մթերքներ են ծծում և այդ պատճառով գրավում են ճան-
ճերին:

Ճանճերը շատ են սիրում նստել հիվանդների կղկղանք-
ների վրա. այդ պատճառով անհրաժեշտ և այնպիսի միջոց-
ների դիմել, վորպեսզի ճանճերը հիվանդների արտադրու-
թյուններին մոտենալու հնարավորություն չունենան, այս-
ինքն խորխին, փոխուժներին, կղկղանքներին, նույնպէս և
կիշտոտ սպիտակեղենին: Այդ նպատակով միշտ հարկավոր
և հիվանդի կղկղանքները պինդ փակել և վորքան հնարա-
վոր և շուտ դուրս թափել արտաքնոց:

Բացի ճանճերի դեմ պայքարելու բոլոր թվարկված մի-
ջոցներից, շատ կարևոր և նաև մարդկային բնակարանում
գտնվող բոլոր ճանճերի վոչնչացումը:

Շատ են տաքածված ճանճերին վոչնչացնելու համար
զանազան թակարդներ:

Թակարդների մեծամասնությունը ապակե անոթի ձևով
և և սարքված և այնպէս, վոր ճանճերը, հեշտությամբ մտնե-
լով այդ անոթի մեջ, դուրս գալու հնարավորություն չեն
կարողանում գտնել: Այդպիսի անոթների մեջ սովորաբար
ածում են գարեջուր կամ հոտավետ ուշարակով ջուր, վորի
հոտը գրավում և ճանճերին:

Կարելի յի այդ տեսակի թակարդ սարքել հետեյալ կերպ:
Պետք և վերցնել մի բաժակ, կամ ավելի լավ և, ապակե,
տրինակի համար, մուրաբայի աման (անպայման ապակե

պատերով), նրա կեսը կամ մի յերրորդը լեցնել սապոնի լուծվածքով կամ մի այլ հեղուկով, վոր գրավում է ճանճերին, և ապա բացը փակել թղթե խուփով. այդ խուփի կենտրոնում պիտի ծակ շինել ճկույտի հաստությամբ, քսել ստորին մակերևույթի վրա մեղր, մուրաբա կամ շաքարի լուծվածք: Հարկավոր է նույն նյութից քսել ծակի շուրջը և այդ թակարդները դնել այն տեղերում, վորտեղ հաճախակի ճանճեր են լինում: Ճանճերը հոծարությամբ մտնում են այդ տեսակ թակարդների մեջ և այնտեղ սատկում են:

Բացի այդ տեսակ թակարդներից կան նաև դանազան թույներ ծծած թղթեր ճանճերին վոչնչացնելու համար:

Այդ թղթերը թանգ չեն, բայց չպիտի գործածել այդ թղթերից խոհանոցում, վորովհետև ճանճերը, թունավոր նյութեր կուլ տալով կարող են ուղղակի ընկնել ուտելիքի մեջ: Ավելի հարմար են կաշոյ թղթերը, այսպես ասած վոտքակապուկները, վորոնց յերեսին ճանճերը կաշում են: Այդ կաշոյ թղթերը համեմատաբար թանգ են, բայց այդպիսիները կարելի չէ պատրաստել տանը: Դրա համար հարկավոր է հասարակ թղթի վրա քսել կաշուն լուծվածք, վոր պիտի պատրաստված լինի կանիֆոլից և փայտյուղից կամ մեքենայուղից: Կանիֆոլի յերկու մասի հետ պիտի վերցնել փայտյուղի մի մաս: Յուղը պիտի տաքացնել և ապա յեռ յեկող յուղի մեջ գցել կանիֆոլը: Յերբ կանիֆոլը կլուծվի յուղի մեջ, պետք է այդ լուծվածքը քսել թղթի վրա: Ամենից հարմար է քսել ապակե թերթիկով:

Ճանճերին վոչնչացնելու համար շատ լավ միջոց է հատուկ նրանց համար շատ թունավոր նյութը, ֆորմալինի լուծվածքը: Այդ լուծվածքը պատրաստելու համար հարկավոր է խառնել վեց գդալ ֆորմալին, մեկ ու կես գդալ կաթ և յերեք գդալ ջուր՝ ավելացնելով դրան մի քիչ շաքար: Լուծվածքը պիտի ածել տափակ ամանների և անոթների մեջ. ճանճերը, գրաված լինելով կաթի միջոցով, կուլ են տալիս այդ խառնուրդը և անմիջապես սատկում են:

Իսկ ինչ վերաբերում է մսի և Վոյլֆորտյան ճանճերին, նրանց վերաբերմամբ՝ բացի այն բոլոր միջոցներից, վո-

րոնք առհասարակ գործադրվում են ճանճերի դեմ, հարկավոր է նկատի ունենալ և այն, վոր նրանք իրենց թրթուռները թողնում են ինչպես մարդկանց, նույնպես և կենդանիների վերքերում, քթերում և ականջներում: Այդ պատճառով վերքերը հարկավոր է բժշկել ժամանակին և յերիզների տակից, վորպեսզի ճանճերը չմտնեն այնտեղ, կապեր գործածել, վորոնք պիտի ծված լինեն թունդ հոտ ունեցող նյութերով, որինակ՝ սապոնի-կրեդոլին լուծվածքով: Խոշոր անասունների՝ ձիերի և կովերի ականջները յերբեմն կծում են ճանճերը և մոեղները և արյունաթաթախ են դարձնում. մսի և Վոյլֆորտյան ճանճերից պաշտպանելու համար կարելի չէ ականջները թաց անել սապոնի-կրեդոլին մի տակառանոց ջրի լուծվածքով, վոր մեծ ոգուտ է բերում անասուններին:

Ամերիկայում վաղուց արդեն հասկացել են, թե ինչ մեծ վտանգ են առաջացնում վարակիչ հիվանդություններ տարածելու գործում ճանճերը, և այդ պատճառով ամերիկացիք ամենակարևոր միջոցներն են ձեռք առնում ճանճերի դեմ պայքարելու համար:

Ամերիկայի շատ տեղերում ճանճերին վոչնչացնում են ամեն միջոցներով և ձևերով: Կազմակերպված են հատուկ կոմիտեներ ճանճերին վոչնչացնելու համար. ստեղծված են սանիտարները բաղմաքանակ խմբեր ճանճերին բռնելու համար, կազմված են «ճանճեր վոչնչացնողների» հատուկ ընկերություններ:

Բնակարաններում, խանութներում, հասարակական վայրերում, դոմերում, ախոռներում և այլն տեղերում ճանճերին վոչնչացնում են հատուկ թակարդների միջոցով: Ամենուրեք դասախոսություններ են կարդացվում այն վտանգի մասին, վոր ստեղծում են ճանճերը վարակիչ միկրոբներ փոխադրելու տեսակետից: Հրատարակվում են բրոշյուրներ և գրքույկներ ճանճերի դեմ պայքարելու միջոցների մասին: Նույնիսկ տարրական դպրոցներում տեղեկություններ են տրվում այն մասին, թե ինչու հարկավոր է վախենալ ճանճերից և ինչ կերպ պայքարել նրանց դեմ:

նով վարակվում, և թե ինչպես մալյարիայի միկրոօրգանիզմները ապրում են մոծակների մեջ:

Ինչպես ցույց տվին գիտական գիտողությունները, ջերմի վարակը գտնվում է վոչ թե բոլոր մոծակների մեջ, այլ նրանց մի առանձին տեսակի մեջ:

Այն մոծակները, վորոնք կարող են վարակվել մալյարիական վարակով, ուրիշ մոծակներից տարբերվում են իրենց ավելի խոշոր արտաքինով և բծավոր թևերով: Յերբ այդ տեսակի մոծակը նստած է առաստաղի վրա, նրա մարմինը կախված է լինում համարյա թե ուղղակի դեպի ցածր: Մոծակների ուրիշ տեսակների մարմինը՝ առաստաղի վրա նստելու ժամանակ փոփոխում է առաստաղի մակերևույթի վրա:


Մալյարիա տարածող մոծակների մարմնի մեջ, նրանց ստամոքսում, աղիքներում և թքագեղձերում շատ հաճախ գտնում են մալյարիայի հարուցիչներին: Միկրոօկոպների ոգնությունը մոծակների ներսում մալյարիական միկրոօրգանիզմի կյանքը դիտելիս կարելի չէ տեսնել, թե ինչպես են նրանք այնտեղ բազմանում:

Յերբ մոծակը ուզում է արյուն ծծել՝ նա խրում է իր խայթը մարդու մաշկի մեջ և ներս է թողնում մեջը իր լորձը: Ահա այդ լորձի հետ միասին մարդու արյան մեջ է մտնում մալյարիայի վարակը, վորը մի քիչ ժամանակ անց (6-ից մինչև 20 օր) առաջացնում է մալյարիական ջերմը:

Այդպիսով տեղի յե ունենում մարդու վարակումը ճահճային ջերմով կամ մալյարիայով:

Վորպեսզի կարելի լինի համոզվել, վոր այդ իսկապես այդպես է և վոր ջերմով մարդ վարակվում է մոծակներից, բժիշկները կատարեցին շատ հետաքրքրական փորձեր: Այսպես, որինակ, յերկու բժիշկ վճռեցին դիտմամբ բնակություն հաստատել մի շատ ճահճոտ տեղում, վոր գտնվում է Իտալիայում: Այդ վայրը համարյա թե ամբողջապես մի ճահիճ է, վորի վրա միշտ վիտում են անթիվ անհամար մոծակներ: Այդտեղ իշխում է ամառը ամենադաժան ջերմը: Այդ վայրի շուրջը գտնվող բոլոր գյուղերը լցված են մա-

լյարիայով: Հենց այդ մալյարիական վայրում բնակություն հաստատեցին բժիշկները: Իրենց մոծակների խայթոցից պահպանելու համար նրանք խիտ ցանցերով պատեցին իրենց բնակարանի բոլոր լուսամուտներն ու դռները: Յեթե նրանք ստիպված էին լինում տնից դուրս դալու, իրենց մոծակների խայթոցից պահպանելու նպատակով, իրենց յերեսն ու ձեռները ծածկում էին խիտ ցանցով: Այդպիսով իրենց պաշտպանելով մոծակների խայթոցից, յերկու բժիշկն էլ ամբողջ ամառը ապրեցին մալյարիոտ վայրում և նրանցից վոչ մեկը չվարակվեց:



Նկ. 4. Վոչմալյարիական մոծակի թրթուռները և հարսնյակները ջրի մեջ — բնական դրությունում: Խոշորացրած 4 անգամ:

Վոչ բոլոր մոծակներն են վարակված մալյարիայով: Կան այնպիսի մոծակներ, վորոնց մեջ մալյարիայի հարուցիչներ չկան, և այդ մոծակները, իհարկե, վտանգավոր չեն: Նույնպես կան և այնպիսի վայրեր, վորտեղ մոծակները մալյարիայով վարակված չեն: Բայց բավական է, վոր այդտեղ գա մալյարայով վարակված մի մարդ, և այդ վայրում կամաց-կամաց կերևան և ուրիշ մալյարիայով հիվանդներ: Նախևառաջ հիվանդանում են նրանք, վորոնք ապրում են

յեկած հիվանդների հետ կամ նրանց մոտ, իսկ հետո հիվանդանում են և մնացյալ՝ ավելի հեռու ապրող հարեանները: Մի քանի ժամանակ անց, մալյարիան սկսում է տարածվել ամբողջ շրջակայքում, և հիվանդների քանակությունը կարելի է հաշվել տասնյակներով և հարյուրներով:

Գիտությունը պարզել է, վոր մոծակները իրենք վարակում են մալյարիական ջերմի հարուցիչներով հիվանդներին կծելիս:

Յերբ մոծակը ծծում է ջերմով հիվանդ մարդու արյունը՝ նրա ստամոքսի մեջ արյան հետ միասին ընկնում են մալյարիայի հարուցիչները, վորոնք սկսում են այնտեղ մեծանալ և բազմանալ: Յերբ այդ վարակված մոծակները կծում են, մալյարիայի հարուցիչները մտնում են առողջ մարդկանց արյան մեջ և ջերմ են առաջացնում:

Այդպես, ուրեմն, ճահճային ջերմը մի մարդուց մյուսին և անցնում, բայց վոչ ուղղակի, այլ մոծակների միջոցով:

Անգնաս մոծակների մեջ մալյարիայի հարուցիչները չեն բազմանում, այլ վոչնչանում են, և այդ պատճառով է, վոր վարակը նրանց միջոցով մարդու չի անցնում:


Մոծակները չեն կարող ապրել առանց ջրի: Նրանք իրենց ձվիկները ածում են ջրի մեջ, և անպատճառ կանգուն կամ դանդաղ հոսող ջրի մեջ: Այդ ձվիկներից դուրս են գալիս փոքրիկ ճիճուներ-թրթուռներ, վորոնք մի քանի ժամանակ ապրում են ջրում, իսկ այնուհետև այդ թրթուռներից դուրս են գալիս մոծակներ: Առանց ջրի, և մանավանդ առանց կանգուն ջրի, մոծակները չեն կարող բազմանալ: Այդ պատճառով այնքան շատ են մոծակները ճահճների մոտ, լճերի, արհեստական լճերի և դանազան ջրոտ տեղերի մոտ: Չոր տեղերում մոծակներ կամ բոլորովին չկան, կամ շատ քիչ կան:

Ինչ է հարկավոր անել մոծակներին վոչնչացնելու համար:

Նախևառաջ հարկավոր է, վորպեսզի մալյարիական վարում չլինի կանգուն ջուր, վորի մեջ մեծ քանակությամբ մոծակներ են բազմանում: Յեթե այդպիսի կանգուն ջուր չի

լինի, մոծակները ձվիկներ ածելու տեղ չեն ունենա և կամաց-կամաց կանհետանան:

Ամենալավ միջոցն է ճահճոտ վայրերում ջերմը վոչնչացնելու համար — չորացնել ճահճները: Այդ նպատակով փորում են խրամատներ այնպես, վորպեսզի այդ խրամատների միջոցով ջուրը կարողանա հոսել վորևե գետի, լճի կամ ծովի մեջ: Այդ նպատակով դանազան տեղերում փորում են խոր ջրհորներ, վորոնցով ջուրը ճահճներից գնում է գետնի խորքը: Այդ բոլոր միջոցների ոգնությամբ ճահճները անհետանում են, խոնավ գետինը ցամաքում է և մալյարիայի վարակը աստիճանաբար վոչնչանում է:



Նկ. 5. Մալյարիական մոծակի (անոֆելեսի) թրթուռները և հարսնյակները ջրի մեջ — բնական զրույթյամբ: Ողորացրած 4 անգամ:

Նույն կերպ հարկավոր է պայքարել դանազան խրամատներում, փոսերում և խոռոչներում կուտակվող և անշարժ մնացող ջրի դեմ: Այդ տեսակ դեպքերում ամենից լավն է այդ փոսերն ու խրամատները լցնել, հարթել այդ վայրը և անձրևային ջրի համար սարքել ջրուղի:

Կանգուն ջուր լինում է ավելի հաճախ գետերի ափերին, յեթե այդ ափերը ցած են և թեքված: Գարնանային վարարությունից հետո այդ տեսակ ափերի վրա մնում են մեծ քանակությամբ փոսեր, վորոնք լցված են լինում կանգուն ջրով և վորոնց մեջ աճում են մոծակների հազարավոր թրթուռներ: Այդ բանի դեմ պայքարելու համար հարմար է գետերի ափերին թումբեր սարքել՝ այդպիսով թույլ չտալով, վորպեսզի ջուրը մնա ափերի վրա: Վերջապես, մոծակների

Թրթուռներին կանգուն ջրի մեջ վոչնչացնելու համար առաջարկվում է կերոսին գործածել: Մոծակի Թրթուռը ունի փոքրիկ խողովակի նման մի բան, վորի միջոցով նա շնչում է: Ող շնչելու համար մոծակի Թրթուռը բարձրանում է ջրի մակերևութի վրա և այդ խողովակը դուրս է հանում: Յեթե ջրի վրա կերոսին է ածված, նավթ կամ առհասարակ վորևե՛հ ճարպոտ նյութ, և յեթե այդ ժամանակ Թրթուռը ջրից դուրս հանի իր շնչական խողովակը, վերջինիս ծակը խըցվում է և Թրթուռը խեղդվում:

Մոծակների Թրթուռներին վոչնչացնելու համար հարկավոր է գործածել փոքր քանակությամբ կերոսին կամ նավթ: Կերոսինի յերկու կամ յերեք շիշով կարելի յե ծածկել շրջապատում 60 մետր ունեցող մի լճակ:

Իտալիայի մի քանի վայրերում հնարավոր յեղավ բոլորովին վոչնչացնել մալյարիայի վարակը՝ ճահիճները, լճերը և արվեստական լճերը կերոսին ածելու միջոցով:

Մոծակների Թրթուռներին վոչնչացնելու համար շատ լավ միջոց է գանազան ավազաններում ոճաձկներ բուծելու միջոցը: Ոճաձկները շատ կենսունակ են և կարող են ապրել ջրով լցված գանազան փոսերում: Չմեռը ոճաձկները սառած են մնում և վոչինչ չեն ուտում, բայց գարնանը շատ են ուտում և ուտում են մոծակների Թրթուռներին: Բացի դրանից՝ մոծակների դեմ պայքարելիս հարկավոր է նրանց վոչնչացնել այն տեղերում, վորտեղ նրանք ձմեռում են: Մառաններում, ախոռներում, սրահներում կարելի յե գտնել հազարավոր մոծակներ, վորոնք ընել են տարվա ցուրտ ժամանակաշրջանում: Նրանց վոչնչացնելու համար հարկավոր է ավելել ավելներով և այրել:

Ճահիճների ցամաքեցումը, Թումբեր սարքերը և մոծակներին վոչնչացնելը մի գործ է, վոր պահանջում է մեծ ջանքեր և շատ միջոցներ, և մենակ մարդու համար անմատչելի յե: Այդ պատճառով մալյարիայի դեմ պիտի պայքարեն մարդային, յերկրային և ռայոնական որգանները:

Բայց և ամեն մի մարդ առանձին պիտի պայքարի և կարող է պայքարել մոծակների դեմ նրան մատչելի միջոցներով:

Այն տեղերում, ուր կան շատ մոծակներ, պետք է աշխատել, վորպեսզի նրանք ներս չթռչեն այն շինության մեջ, վորտեղ մարդ է ապրում: Դրա համար լուսամուտների և դռների վրա խիտ ցանցեր պիտի սարքել: Վորոշ դեպքերում լավ է ազդում ծուխը մոծակներին դուրս քշելու համար, վոր պիտի անել դինու ճյուղեր և վալերյանի արմատներ այրելով: Մոծակները ծխի պատճառով դուրս են թռչում: Դրանից հետո հարկավոր է պինդ փակել լուսամուտներն ու դռները:

Մալյարիական վայրում՝ արևը մայր մտնելուց հետո, յերբ մոծակները դուրս են թռչում մեծ քանակությամբ, ամենից լավ է դուրս չգալ, իսկ յեթե դուրս գալու հարկավորություն կա, պիտի յերեսի վրա խիտ ցանց գցել, իսկ ձեռքերին հագնել ձեռնոցներ՝ մոծակների խայթոցներից պաշտպանվելու համար:

Ինքնըստինքյան հասկանալի յե, վոր մալյարիական վայրերում հարկավոր չե քնել բացողյա: Յեթե կարևորություն կա բացողյա քնելու, մոծակներից պաշտպանվելու համար հարկավոր է բարձրանալ վորևե՛ր բարձրությունների վրա, վորոնք գտնվում են գետնից 4 մետրից վոչ ցած, վորովհետև մոծակները սովորաբար այդպես բարձր չեն թռչում:

Այն վայրերում, ուր մալյարիան շատ է տարածված, միշտ հարկավոր է տները շինել վորքան կարելի յե հեռու գանազան տեսակի ջրամբարներից: Մոծակները սովորաբար հեռու չեն թռչում այդ տեսակի ջրամբարից, վորտեղ նրանք առաջացել են, յերբեք գետնից չափազանց չեն բարձրանում, և խայթում են մեծ մասամբ յերեկոյան և գիշերը:

Վերջապես, այնպիսի վայրերում, վորտեղ մարդիկ սաստիկ և անխտիր մալյարիայով են հիվանդանում, հիվանդացումը կանխելու համար պետք է ընդունել խիսին:

Խիսինը սպանում է մալյարիայի հարուցիչներին, վորոնք ընկել են մարդկային արյան մեջ, վարակված մոծակի խայթոցից հետո: Խիսին պիտի ընդունել ամառվա ամիսների ընթացքում ամեն որ՝ բժիշկների ցուցմունքներով:

IV. ԼՎԵՐԸ ՅԵՎ ՓԱՅՏՈՁԻԼՆԵՐԸ, ՎՈՐՊԵՍ ՎԱՐԱԿԻՉ ՇԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՏԱՐԱԾՈՂՆԵՐ, ՅԵՎ ՆՐԱՆՑ ԴԵՄ ՊԱՅՔԱՐԵԼՈՒ ՄԻՋՈՑՆԵՐԸ

Լվերն ու փայտօջիլները, ինչպես և այլ արյուն ծծող միջատները, կարող են նույնպես տարածել զանազան վարակիչ հիվանդություններ: Մանավանդ վտանգավոր են լվերի և փայտօջիլների խայթոցները հյուրանոցներում, պանդոկներում, շոգենավերում և վագոններում գիշերելիս, վորոնցով անընդհատ նոր և նոր մարդիկ են անցնում և վորոնց մեջ հաճախ պատահում են և հիվանդներ:

Թեպետ և փայտօջիլները վարակելու տեսակետից պակաս վտանգավոր են, քան ուրիշ միջատները, սակայն նրանք՝ սաստիկ քոր առաջացնելու պատճառով՝ չափազանց անսիրտ են:

Լվերն և փայտօջիլները կարող են բոր փոխադրել, վորովհետև բորոտներին խայթող փայտօջիլների և լվաների մեջ գտել են բորի միկրոբներ: Իսկ վերջին ժամանակներս գիտությունը պարզել է, վոր լվերը նույնպես և ծաղիկ են փոխադրում:

Լվերը նամանավանդ վտանգավոր են վորպես այլ՝ ավելի սարսափելի հիվանդության, այն է — ժանտախտի փոխադրիչներ:

Ինչպես գիտությունն է պարզել, ժանտախտով հիվանդանում են վոչ միայն մարդիկ, այլ և զանազան կենդանիները, մանավանդ դաշտամկները, սիմորները, տարաբազանները և այլ կրծողները, վորոնք այդպիսով ժանտախտ են տարածում: Այն լուսն, վորը կծել է ժանտախտով հիվանդ կենդանուն կամ մարդուն, իր կնճթիկի վրա կամ ստամոքսի մեջ պահում է ժանտախտի միկրոբներ և առողջներին խայթելիս վարակում է նրանց ժանտախտով: Ժանտախտի միկրոբները վոչ միայն չեն վոչնչանում լվի ստամոքսի մեջ, այլ և ապրում են այնտեղ և բազմանում՝ տարածվելով լվի ամբողջ մարմնի վրա: Լվերը ժանտախտ են տարածում

այն թուղթի միջոցով, վոր նրանք արտադրում են խայթելիս՝ նույնպես և ժանտախտի միկրոբներով վարակված կղկղանքների միջոցով:

Հայտնի գիտնական Սիմոնդը հետևյալ փորձն արեց: Նստացնելով և՛ առողջ, և՛ ժանտախտոտ դաշտամկներին մեկ վանդակի մեջ, վորը բաժանված է յեղել ցանցով, նա նկատում էր, վոր առողջ դաշտամկները վարակվում էին հիվանդներից լվաների միջոցով: Իսկ յեթե ժանտախտոտ դաշտամկների կողքին պահվում էին ուրիշ՝ առողջ դաշտամկներ, բայց վանդակում այնպես բաժանված լինելով, վոր հիվանդ դաշտամկների լվերը չէին կարողանում հարձակվել նրանց վրա, այդ դաշտամկները յերեք չէին վարակվում և միշտ առողջ էին մնում: Սիմոնդը ապացուցեց նաև, վոր ժանտախտի միկրոբները կարող են բազմանալ լվերի աղիքներում:

Լվերը գոյանում են սպիտակավուն ձվիկներից, վոր սովորաբար լվերը ածում են հատակների ձեղքերում և աղբում: Ձվիկներից 4—6 ուր անց դուրս են գալիս ձիճույի նման թրթուռներ, վորոնք այնուհետև դառնում են խակալան միջատներ:

Լվերին հարկավոր է վոչնչացնել նրանց գոյացման տեղերում, այսինքն զանազան տեսակի աղբի և հատակների ձեղքերում: Դրա համար առաջարկվում է ձեղքերը քսել հատուկ մաստիկայով, վոր պատրաստվում է 600 գրամ ալյուրից, 9 բաժակ ջրից և թրթուռների 1 թեյի գդալից: Այդ խառնուրդը պետք է տաքացնել և նրա մեջ գցել մանր կտրատած թուղթ, մինչև վոր ստացվի թանձրություն: Ստացած զանգվածը պետք է յեփել, լավ խառնել և այնուհետև անմիջապես՝ տաք դրությամբ՝ դանակով քսել ձեղքերին. սառչելով, այդ զանգվածը ամրանում է:

Նույնպես խորհուրդ է տրվում ամեն յերեք շաբաթ մի անգամ շենքերը լվանալ սապոն-ձյութային խառնուրդի 5% լուծվածքով կամ սապոնի — կրեդոլի 1% — 2% լուծվածքով, 5%-նոց կարբոլաթթվուտով, լիզոֆորմով և կրեոլինով:

Պարսկական և դալմատական փողիները քիչ են ազդում. ավելի ուժեղ են ազդում լվաների վրա նափթալինը, քաֆուրը և ոշինդրի տերեփի ծուխը:

Լվերը վոչնչանում են նաև յերկու բոսկիլի ընթացքում կերոսինի և սապոնի լուծվածքի խառնուրդի մեջ (1 : 1.000 հարաբերությամբ) :

Կերոսինի եմուլսիա (կաթնակերպ խառնուրդ) պատրաստել կարելի յե լուծելով սապոնի յերեք մասը ջրի 15 մասում և աստիճանաբար ավելացնելով, լավ խառնելով, տաք կերոսին մինչև լրիվ 100 մասը :

Նախ քան այդ եմուլսիան հատակին քսելը՝ խառնում են ջրի հետ՝ 1 : 20 հարաբերությամբ :

Մեծ մկներին վոչնչացնելու համար գործ են ածվում զանազան թույներ, ամենից հաճախ ֆոսֆոր (լուսածին), մկընդեղ, ստրիխնին և այլ՝ հատկապես մեծ մկներին վոչնչացնելու համար պատրաստվող միջոցներ :

Վորպեսզի մեծ մկները ժանտախտոտ տեղերից յեկող շոգենավներից ժանտախտ չփոխադրեն, շոգենավը թույլտվություն չի ստանում ավին մոտենալու և վորոշ ժամանակով հսկողության տակ և մնում, իսկ ճանապարհորդներին ուղարկում են դիտողությունների համար հատուկ մեկուսարանը : Իսկ շոգենավի վրա մեծ մկներին վոչնչացնում են բոլոր գետեղարանները ծծմբային զագերով, հատուկ գործիքների օգնությամբ, լցնելով :

Մեծ մկների դիակները վոչնչացնելու համար գործադրվում և կերոսին, վորով ջրում են սատկած մեծ մկներին և ապա այրում, վորովհետև այդ կերպ վոչնչանում են լվերը, վորոնց միջոցով ժանտախտը մեծ մկներից անցնում և մարդուն :

Բացի դրանից ժանտախտի դեմ պայքարելու համար կան նաև առանձին նախազգուշացնող պատվաստներ, վորոնք գործադրվում են ինչպես չնդկաստանում, նույնպես և այլ տեղերում :

Ներկայումս համարվում և, վոր փայտոջիլները կարող են այնպիսի հիվանդություններ փոխադրել, վորպիսին են՝ թոքախտը, բորը, քութեղը, ծաղիկը և հետադարձ տիֆը : Ինչպես հայտնի յե, փայտոջիլները, սովորաբար ցերեկով թագնվելով, միայն գիշերը մարդու անկողնի մեջ են մտնում,

վորպեսզի ծծեն նրա արյունը, իսկ կշտանալուց հետո նրանք շտապ կերպով թագնվում են : Բացի դրանից փայտոջիլները գերադասում են մնալ միևնույն տեղում և մնում են տերերի կողմից թողնված տան մեջ, գերադասելով ամիսներ շարունակ քաղցած մնալը, քան հեռանալը և ավելի հարմար տեղ գտնելը : Թեև փայտոջիլները յերբեմն մնում են այն մարդկանց զգեստներում, վորոնք քնում են առանց հանվելու, և այդ պատճառով կարող են այդ զգեստի միջոցով փոխադրվել, այնուամենայնիվ պիտի համարել, վոր փայտոջիլի դերը վարակը փոխադրելու մեջ այնքան մեծ չե, ինչպես այլ միջատներին — ճանճերի, մոծակների և վոջիլների :

Փայտոջիլները ապրում են անկողինների ձեղքերում, դռշակների ծալքերում, և այդ տեղերում նրանց թիվը շատ երայց և այնպես նրանց գլխավոր մասը ապրում և պատերի վրա : Դա մանավանդ նկատելի յե գյուղացիական խրճիթներում, վորտեղ գերաններից շինած պատերը ներսից սովորաբար վոչնչով չեն ծածկված և կազմում են մեծ քանակությամբ խոշոր ու մանր ձեղքեր, վորոնց մեջ փայտոջիլները բնակություն են հաստատում և բազմանում են մեծ քանակությամբ :

Փայտոջիլները անսովոր դիմացկունություն են ցույց տալիս, կարողանում են յերկար իրենց գոյությունը պահպանել առանց ուտելու, միևնույն ժամանակ նրանք շատ շուտ են բազմանում և յերկար են ապրում : Նպաստավոր ջերմության դեպքում փայտոջիլները կարող են բազմանալ ամբողջ տարվա ընթացքում, ըստ վորում ամեն մի եզր մոտ 100—150 ձույն ածում : փայտոջիլները շատ դիմացկուն են ջերմության նկատմամբ : Ջերո և գերոյից մի քիչ պակաս աստիճանի դեպքում փայտոջիլների ձվաները կենդանի յեն մնում մինչև 8 օր, իսկ 15 մինչև 35 աստիճան (ըստ Ցեսիուսի) ջերմության դեպքում փայտոջիլների ձվաները զարգանում են 8 օրից : Փայտոջիլների թրթուռները, վորոնք արտաքինով նման են հասունացած միջատներին, սնվում են մարդու կամ կենդանիների արյունով և կարող են առանց սննդի ապրել տաք տեղում մոտավորապես 18 ամիս : Հասունացած փայ-

տողիլները, ինչպես և նրանց թրթուռները, շատ դիմացկուն են քաղցի և ցրտի նկատմամբ:

Ինչպես և հարկավոր պայքարել փայտղիլների դեմ:

Այն դեպքերում, յերբ հարկավոր և լինում գիշերել ժամանակավորապես և յերբ հնարավոր չե բոլորովին վոչնչացնել փայտղիլներին, հարկավոր և պահպանվել նրանց խայթոցներից այն միջոցներով, ինչպես և լվերից ու վոջիլներից, այսինքն այդ միջատներին յետ քշող հոտեր տարածող զանազան պրեպարատներ (պատրաստուկներ) գործածելով: Յեւ վորովհետև փայտղիլները առանձին սիրով կծում են մարմնի բաց մասերը, չպիտի մոռանալ, վոր հարկավոր և յերեսին ու ձեռքերին քսել պարադիտներին յետ քշող զանազան հեղուկներ: Մշտական բնակարաններում հարկավոր և խիստ կերպով պայքարել փայտղիլների դեմ և նրանց բոլորովին վոչնչացնել: Փայտղիլներին վոչնչացնելու ամենահասարակ միջոցներն են յեփուրը կամ սամովարների գոլորշին, բայց, դժբախտաբար, այդ միջոցները միշտ չեն թափանցում այն բոլոր ճեղքերի մեջ, վորտեղ ապրում են փայտղիլները և ձու յեն ածում: Ինչպես դիտողութուններն են ցույց տալիս, փայտղիլները բոլոր միջատներից ամենապայուսներն են թույների վերաբերմամբ, և այդ պատճառով ուրիշ միջատներին սպանող թույները պետքական են փայտղիլներին վոչնչացնելու համար: Այդ կանոնից միակ բացառութունն և կադում նավթալինը, վորը շատ և սպանում լվերին, վոջիլներին, բայց ամենևին չի ազդում փայտղիլների վրա: Միջատների դեմ գործածվող նյութերից յուրաքանչյուրով կարելի յե թրջել փայտղիլների և նրանց ձվաների ու թրթուռների կուտակման տեղերը: Մանավանդ կորստաբեր և փայտղիլների համար կես կամ յերեք քառորդ թաս պաղլեղից և յերեք բաժակ յետ յեկած ջրից պատրաստված տաք լուծվածքը, վորով կարելի յե ջրել փայտղիլների բները, չորանալուց հետո այդ բները քսելով տաք՝ քացախի հետ խառնված ասաղձագործական սոսինձով: Փայտղիլները վրա կա ճարպի շերտ և այդ պատճառով բոլոր ջրոտ լուծվածքների միջոցները, վորոնք առաջարկվում են միջատների դեմ,

փայտղիլները վրա քիչ են ազդում, վորովհետև նրանց մեջ չեն թափանցում: Իսկ այն բոլոր նյութերը, վորոնց մեջ կա սապոն, կերոսին, կամ սկիպիդար, և վորոնք լավ են լուծում ճարպը, վոչնչացնում են փայտղիլներին:

Դալմատական և պարսկական փոշիները, ինչպես դիտողութուններն են ցույց տալիս, համարյա չեն ազդում փայտղիլների վրա: Շենքերը փայտղիլներից ազատելու միջոցներից ամենապետքականն և ծծումբը, վոր պիտի այրել յերկաթե անոթներում և վորը այրվելու ժամանակ առաջացնում և ծծմբային գազ: Ծծմբային գազը վոչնչացնում և փայտղիլներին, նրանց թրթուռներն ու ձվաները, և հոսալի հետևանքներ ունենալու համար հարկավոր և, վորպեսզի ծծմբային գազը թափանցի ծխատվության յենթարկվող շենքի բոլոր ճեղքերի մեջ: Ծուխ տալուց հետո շենքը պիտի փակ լինի ամենաքիչը 24 ժամվա ընթացքում: Բացի ծծմբով ծխատվության յենթարկելուց, փայտղիլներին վոչնչացնելու համար խորհուրդ և տրվում բենզին կամ կերոսին գործածել: այդ պիտի անել փոքրիկ փայտի կտորների կամ փետուրների միջոցով բոլոր ճեղքերի մեջ քսելով: Բայց այդ փայտղիլները, ինչպես և լվաները, վոչնչանում են գոլորշի գործադրելուց կամ նրանց բների մեջ սուլեմայի 5 մասից և ջրի 1000 մասից պատրաստված լուծվածք քսելուց: Փայտղիլներով չափազանց լցված շենքը պետք և մաքրել պաստառները և սվաղը քերթելով, պատերին և ճեղքերի մեջ կրակաթ քսելով, սկիպիդար կամ կերոսին քսելով: Այնպիսի շենքերում, վորտեղ պատերը սվաղած չեն և վորտեղ փայտղիլների բոլոր բները կարելի յե գտնել, փայտղիլների սաստիկ բազմանալու դեպքում պետք և ժամանակ առ ժամանակ կրկնել կերոսին, կրակաթ կամ սկիպիդար քսելը այն բոլոր տեղերին, վորտեղ կան փայտղիլների բներ, իսկ բացի այդ՝ հարկավոր և լավ ներկել շենքի ներսը:

5. ՎՈՋԻՆՆԵՐԸ, ՎՈՐՊԵՍ ՎԱՐԱԿԻՉ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆ- ՆԵՐ ՏԱՐԱԾՈՂՆԵՐ, ՅԵՎ ՆՐԱՆՑ ԴԵՍ ՊԱՅՔԱՐԵԼՈՒ ՍԻՋՈՑՆԵՐԸ

Բացի նրանից, վոր վոջիլները կծելով շատ են անհան-
գատացնում մարդու, խանգարելով նրա աշխատանքը և բու-
նը, նրանք նաև ամենավտանգավորն են վարակիչ հիվան-
դություններ փոխադրող միջատներից:

Դիտությունը ճշտորեն վորոշել է, վոր բծավոր և հետադարձ
տիֆը — այդ յերկու սարսափելի հիվանդությունները, վորոնց
հետևանքով ամեն տարի շատ մարդ է մեռնում, մարդուց մար-
դու վրա յեն անցնում այդ զգվելի միջատների միջոցով:




Նկ. 6. Մոկորական թյունն և ցույց տալիս, փոխադրում են
վոջիլ:

Ամեն մեկը ճանաչում է այդ մանր
զգվելի միջատներին — վոջիլներին. վո-
րոնք մտնում են մեր մազերի, զգեստի
մեջ և, կծելով, խանգարում են մեր աշխա-
տանքը, քունն ու հանգիստը: Յեվ գոր-
ծարաններում, և՛ գյուղում, և՛ դրանոց
ներում, և՛ ռազմերթի ժամանակ, և՛ խրա-
մատներում — ամեն տեղ կան մեծ քանա-
կություններ այդ զգվելի կենդանի արա-
րածները, վորոնք թունավորում են մեր
կյանքը, և, գլխավորը, ինչպես գիտու-

Ամեն մեկը ճանաչում է այդ մանր
զգվելի միջատներին — վոջիլներին. վո-
րոնք մտնում են մեր մազերի, զգեստի
մեջ և, կծելով, խանգարում են մեր աշխա-
տանքը, քունն ու հանգիստը: Յեվ գոր-
ծարաններում, և՛ գյուղում, և՛ դրանոց
ներում, և՛ ռազմերթի ժամանակ, և՛ խրա-
մատներում — ամեն տեղ կան մեծ քանա-
կություններ այդ զգվելի կենդանի արա-
րածները, վորոնք թունավորում են մեր
կյանքը, և, գլխավորը, ինչպես գիտու-

մասի վրա, ըստ վորում նրա գտնվելու սիրած տեղն է ծոծ-
րակի շրջանը և զագաթը: Զգեստի վոջիլը գլխի վոջիլից խո-
շոր է և ապրում է զգեստի և սպիտակեղենի մեջ, և մանա-
վանդ սիրում է մնալ այնտեղ, ուր սպիտակեղենի ծալքեր
են գոյանում և սպիտակեղենը շոշափում է մաշկը, այսինքն՝
փորի առջևի և կողքի մակերևոյթների վրա, վզի, ծոծրակի,
ուսերի և նստատեղիյի վրա: Գլխի և սեռային անդամների
մազերի վրա զգեստի վոջիլ չի պատահում յերբեք: Զգեստի
վոջիլը սպիտակեղենից անցնում է մաշկի վրա միայն սնունդ
ստանալու համար, վորի համար նա կծում է մաշկը և ծծում
է արյունը: Կծելուց հետո սաստիկ քոր է առաջանում, վորի
հետևանքով մարդ սաստիկ պահանջ է զգում քորելու մաշկը,
և մաշկի վրա յերևում
են քորի հետքեր: Քորի
պատճառն այն է, վոր
վոջիլը վերքի մեջ ար-
տադրում է հատուկ
գրգռող նյութ: Զգես-
տի վոջիլները մարդուց
անցնում են շրջապա-
տող իրերի վրա՝ հա-
տակի, աթոռների,
կահկարասիքի վրա,
յեթե, իհարկե, մարդու



Նկ. 7. Յայլոջիլ

վրա նրանք շատ են՝ նրանք ուղղակի կարող են զգեստից
թափվել հատակի վրա և ապա սողալ ուրիշ մարդկանց վրա:
Պետք է ասել, վոր թեև վոջիլները չեն թռչկոտում լվա-
ների նման, այլ միայն սողում են, սակայն մարդուց մար-
դու վրա նրանք տեղափոխվում են շատ շուտ, վորովհետև
վոջիլները զարմանալի շուտ տեղափոխվելու ընդունակու-
թյունն ունեն: Վոջիլների յերեք տեսակից վարակիչ հիվան-
դություններ տարածելու տեսակետից ամենավտանգավորն է
և ամենաանախորժը զգեստի կամ սպիտակեղենի վոջիլը,
վորովհետև նա ավելի շուտ է բազմանում, քան ցայլոջիլը
կամ գլխի վոջիլը, և նրանից ազատվելը շատ ավելի դժվար

և, քան վոջիլների ուրիշ տեսակներէց: Զգեստի վոջիլները շուտ են աճում: Զգեստի վոջիլի եզը ածում է մոտ 70—80 ձու (անիծ), վորոնցից 5—6 որ անց գոյանում են նոր վոջիլներ: Յերկու-յերեք շաբաթից հետո այդ նոր վոջիլներէց յուրաքանչյուրը արդեն ընդունակ է նույնպես ածել նույն քանակութեամբ նոր անիծներ: Այդպիսով մենք տեսնում ենք, վոր վոջիլների բեղմնավորութեանը դարձանալի մեծ է. իսկ շնորհիվ այդ տեսակի մեծ բեղմնավորութեան, զգեստի վոջիլը կարող է շատ կարճ ժամանակի ընթացքում ուղղակի մարդու ամբողջ մարմինը ծածկել: Հաշվված է, վոր վոջիլի մի եզը 8 շաբաթից հետո կարող է սերունդ տալ 5000 վոջիլի քանակութեամբ: Մի հոլանդական գիտնական, վորի անունն է Լենհուկ, ուղկով իմանալ, թե վորքան շուտ են բազմանում վոջիլները՝ հետեյալ փորձն արեց: Նա իր գուլպայի մեջ յերկու եզ վոջիլ դրեց (իսկ այն ժամանակ, յերբ տպրում էր այդ գիտնականը, այսինքն 200 տարի առաջ, հագնում էին յերկար, մետաքսե գուլպաներ և կարճ շալվարներ մինչև ծնկները) և իր վրա յեր պահում այդ գուլպաները թե ցերեկը թե գիշերը 2 ամիս, չնայած վոր սարսափելի քորի պատճառով նա չէր կարողանում վորևէ բանով պարապել և քնել: Իսկ յերբ նա արդեն չկարողացավ համբերել, վորովհետև վոջիլները կծեուց վտր սաստիկ քոր էր գալիս, նա հանեց իր գուլպան և ամենայն ուշադրութեամբ հաշվեց բոլոր նրա մեջ յեղած վոջիլներին: Նրա զարմանքը մեզ էր, յերբ պարզվեց, վոր գուլպայի մեջ 18.000 հատ վոջիլ գտնվեց: Կեղտոտ սպիտակեղենը, անմաքրութեանը, սպիտակեղենի և զգեստի ուշ-ուշ փոփոխելը շատ նպաստավոր են վոջիլների բազմացման համար, վորովհետև վոջիլները ամենից շատ կեղտ են սիրում: Մի անգամ չորս ուսանող հետեյալ փորձն արին: Նստեցին կտր սեղանի շուրջը և սեղանի մեջտեղը դրին զգեստի վոջիլ: Վոջիլը սողաց ուսանողներից մեկի կողմը: Այն ժամանակ ուսանողները փոխեցին իրենց տեղերը, բայց վոջիլը դարձյալ սողաց նույն ուսանողի կողմը, թեև նա նստել էր մի ուրիշ տեղ: Այդ փորձը ուսանողները կրկնեցին մի քանի

անգամ, բայց միշտ նույն բանն էր ստացվում. վոջիլը համա կերպով սողում էր իր ընտրած ուսանողի կողմը: Ի՞նչ պարզվեց: Պարզվեց, վոր այն ուսանողը, վորին այնպես հավանեց վոջիլը, բոլոր ուսանողներից ամենակեղտոտն էր: Նա չէր սիրում բաղնիք հաճախել, միշտ կեղտոտ սպիտակեղեն էր հագնում և նրանից կեղտոտ սպիտակեղենի և անմաքուր մաշկի անախորժ հոտ էր գալիս: Իսկ վորովհետև վոջիլներն ունեն հատուկ բեղիկներ, վորոնց ոգնութեամբ նրանք շատ լավ կարողանում են տարբերել զանազան հոտեր և վորոնք քթի դեր են խաղում, վոջիլը, ինչպես յերբ վում է, գրավված լինելով այն հոտով, վորը առաջանում էր անմաքրասեր ուսանողից, ամեն անգամ այդ փորձի ժամանակ զեպի այդ ուսանողն էր սողում: Առհասարակ հարկավոր է ասել, վոր վորքան մարդ անմաքրասեր է և կեղտոտ, այնքան շատ են սիրում վոջիլները նրա վրա մնալ: Այդ պատճառով վոջիլները ամենից սիրով հարձակվում են թափառաշրջիկների, աղքատների, անապատաճների և անապատաճների ծերերի և այն բոլոր մարդկանց վրա, վորոնք բաղնիք չեն հաճախում, չեն լվացվում և չեն փոխում կեղտոտ սպիտակեղենը: Կան այնպիսի մարդիկ, վորոնք այնչափ սովորում են վոջիլներին, վոր անգամ չեն նկատում նրանց խայթոցները, և այդ մարդկանց սպիտակեղենի վրա վոջիլները՝ ասլում են հարչուրներով և նույնիսկ հազարներով:

Զգեստի վոջիլը առանձնապես սիրում է իր անիծները ածել սպիտակեղենի և հագուստի զանազան ծալքերի մեջ և մանավանդ կարի վրա: Մանավանդ շատ անիծներ լինում են ուժիքի վրա, գոտու մոտ, փոխանի և վարտիքների կարի վրա: Այնտեղ ասլում են նաև իրենք վոջիլները, վորոնք մարդու մարմնի վրա յեն լինում միայն ուտելու ժամանակ, յերբ նրանք մաշկի մեջ խրում են իրենց խայթը, իրենց շրթունքներով հպվում են մաշկին և աղահորեն արշուն են ծծում: Մնացած ժամանակ զգեստի վոջիլները ասլում են մարդու հագուստի մեջ և մեծ մասամբ այն զգեստի վրա, վորը ծածկում է նրա մարմինը, այսինքն ներքին սպիտակեղենի վրա: Բայց սաստիկ վոջիլութեան ժամանակ վո-

ջիւնները լինում են ամենուրեք — թեւերում, գուլպաներում, կոշիկներում և դրսի հագուստի վրա — ժիւետի, վարտիքի, բաճկոնի վրա և հաճախ լինում են վերարկուների և շինելների վրա: Զգեստի վոշիւնները մանավանդ սիրում են բրդե սպիտակեղենը (շապիկներ, գործած ժիւետներ, ֆուֆայկաներ), վորովհետեւ բոլոր գործած իրերը ունեն անհարթութիւններ, անկյուններ և ծովածքներ, վորոնց մեջ զգեստի վոշիւնները մանավանդ սիրում են անիծներ ածել:



Նկ. 8. Զգեստի վոշիւն անիծը՝ կտորի վրա: Շատ խոշորացրած:

Բացի այն, վոր վոշիւնները կծելով սաստիկ անհանգստացնում են մարդուն, խանգարում են նրա աշխատանքը և քունը, վոշիւնները, և մանավանդ զգեստի վոշիւնները, ինչպես արդեն ասված է յեղեկ, տարածում են յերկու սարսափելի հիվանդութիւն — բծավոր և հետադարձ տիֆ: Ինչպես դիտողութիւններն են ցույց տալիս, վարակիչ է վոշ միայն տիֆով հիվանդը, վորի վրա կան վոշիւններ, այլ և վարակիչ են բծավոր տիֆով հիվանդների տնից յելած սպիտակեղենը, հագուստը, իրերը, վորովհետեւ նրանց մեջ կարող են լինել վոշիւններ, վորոնք չափազանց վտանգավոր են բծավոր տիֆ փոխադրելու տեսակետից: Բծավոր և հետադարձ տիֆով հիվանդների վարակը գտնվում է արյան մեջ, և զգեստի վոշիւնը, խմելով հիվանդի արյունը, արյունի հետ միասին ծծում է և վարակը: Այդ վարակը նա կարող է պահել իր մարմնի մեջ շատ յերկար ժամանակ, և այդ կերպ վարակված վոշիւնը կծելով առողջ մարդկանց, նրանց մարմնի մեջ տարածում է տիֆային վարակը: Հարկավոր է հիշել, վոր տիֆի վարակը կարող է պատմաստվել առողջ մարդկանց և վարակված զգեստի վոշիւնի ճգնելիս, ըստ վորում վարակը անմիջապես ներմուծվում է մարդու

մաշկի մեջ, քորելու ժամանակ առաջացած չանդովածքների մեջ:

Յեւ վորովհետեւ զգեստի վոշիւնը ապրում է, ինչպես արդեն ասված է, վոշ թե մարմնի վրա, այլ զգեստի վրա, սպիտակեղենի և հագուստի մեջ, այդ պատճառով բծավոր տիֆով հիվանդների հագուստը և սպիտակեղենը ամենավտանգավոր առարկաներն են վարակ փոխադրելու տեսակետից, վորովհետեւ նրանց վրա կարող է լինել վոշիւնների անագին քանակութիւն: Հայտնի յեն այնպիսի դեպքեր, յերբ իրերի մեջ վարակը պահպանվում էր մեկ տարուց վոշ պակաս: Բծավոր տիֆով հիվանդներին խնամողը նույնպես կարող է փոխադրել վարակը, վորովհետեւ հիվանդներին խնամելիս նա կարող է իր վրա փոխադրել վարակված զգեստի վոշիւն, վորը այնուհետեւ ուրիշ մարդկանց վրա յե անցնում և նրանց կծելով նրանց մարմնի մեջ վարակ է մտցնում: Շատերը համարում են, վոր բծավոր տիֆով հիվանդը, վորը ամենեւին ազատ է վոշիւններից և անիծներից, լավ լվացած է վաննայում, վորի մազերը խուզած են, վորը հադին ունի մաքուր սպիտակեղեն և գտնվում է լավ առողջապահական հանգամանքներում, վորտեղ բոլորովին չկան զգեստի վոշիւններ, վտանգավոր չէ բծավոր տիֆի վարակը փոխադրելու տեսակետից:

Վոշիւնների ամենաուժեղ թշնամին է մաքրութիւնը, մաքուր մարմինը և մաքուր սպիտակեղենը: Յեթե մարդ հաճախ փոխի սպիտակեղենը, հաճախ վաննա ընդունի կամ բաղնիք գնա (շաքաթական 2 անգամից վոշ պակաս), վոշիւններ չեն յերևա: Իհարկե, անհրաժեշտ է, վոր այդ անն բոլորը, հակառակ դեպքում բոլոր միջոցները կլինեն ապարդյուն, վորովհետեւ բավական է, վոր գործարանում կամ գորանոցում մի վոշտու մարդ լինի, վորպեսզի մյուս մարդիկ ևս վոշտուվեն, վորովհետեւ հայտնի յե, վոր վոշիւնները սաստիկ շուտ են բազմանում և շուտ են սողում մարդկանց մարմնի վրա: Սպիտակեղեն հաճախակի փոխելը, մազեր խուզելը, ամեն շաքաթ բաղնիք հաճախելը, վաննաները, սապոնը — ահա այն անհրաժեշտ պայմանները, վորոնց դեպ-

քում կարելի չե պայքարել վոջիլների դեմ: Բայց իհարկե՝ շատ հաճախ, մասնավորապես ռազմերթի ժամանակ, հաճախակի սպիտակեղեն փոխելը և բաղնիքը շատ անգամ մատչելի չեն: Այդ պատճառով այդ միջոցների փոխարեն հարկավոր է դիմել մի այլ միջոցի, վորն նույնպես ուժեղ ազդեր վոջիլներին վրա, ինչպես մաքրությունը և վորը միևնույն ժամանակ բոլորի համար մատչելի լինելու հան շատ միջոցներ, վորոնք առաջարկված են վոջիլների դեմ պայքարելու համար, բայց մենք այստեղ կմատնանշենք միայն այն միջոցները վորոնք ամենաներգործելին են և ամենամատչելին: Գլխի վոջիլների դեմ պայքարել դժվար չէ: Գլխի մազերի կարճ խոզելը ամենալավ միջոցն է վոջիլների դեմ, իսկ ավելի լավ է սափել գլուխը, վորովհետև այն ժամանակ արդեն գլխի վրա չի մնա և՛ վոջ մի վոջիլ, և՛ վոջ մի անիծ: Իսկ անիծներին մազերի վրա վոջնչացնելու համար հարկավոր է գլուխը լվանալ տաք ջրով քացախախառն, և ապա սանրել այն խիտ սանրով. քացախի մեջ լուծվում է այն սոսնձակերպ նյութը, վորոնց միջոցով վոջիլները մազերին կպցնում են անիծները. ահա թե ինչու նրանց հեշտ է հանել սանրով տաք քացախի ազդեցությունից հետո: Նույնպես լավ է ազդում, յեթե մազերը, վորոնց վրա անիծներ կան, թրջենք կերոսինով կամ բենզինով: Այդ նյութերը ազդում են ինչպես վոջիլների, նույնպես և անիծների վրա, վորովհետև նրանց զրկում են շնչելու հնարավորությունից, նրանց շրջապատելով համատարած շերտով, փակելով նրանց շնչական մարմինները և թունավորելով նրանց: Հարկավոր է միայն հիշել, վոր կերոսինն ու բենզինը շուտ են բլրնկվում, և այդ պատճառով պետք է շատ զգույշ լինել այն ժամանակ, յերբ գլուխը թրջած է նրանցով:

Վոջիլներին սաստիկ վոջնչացնում է տաքությունը — բարձր աստիճանի ջերմությունը: Նույնիսկ սպիտակեղենի և հագուստի հարթուկելը տաք հարթուկով յերկու կողմից նպաստում է վոջիլների վոջնչացմանը: Սպիտակեղենը և գլխի հագուստը լիովին տաքացնելու համար, յեթե նրանց վրա կան վոջիլներ, ամենից լավ է դնել $1/4$ կամ $1/2$ ժա-

մով փոխ մեջ: Վոջիլներին սպիտակեղենի վրա բոլորովին վոջնչացնելու համար հարկավոր է սպիտակեղենը մոխրաջրել կամ յեփ տալ: Բարձր ջերմության միջոցով վոջիլներին մարդկանց հագուստի մեջ վոջնչացնելու համար գործադրվում են զանազան շոգեկամեղաներ և չոր կամեղաններ, վորոնք գործում են ջերմացրած, տաք ողի միջոցով: Այդպիսիքն են հասարակ կամ շոգեֆորմալինի կամեղանները և Հելիոս կամեղան, վոր գործում է տաք ողի միջոցով, վորի ջերմությունը կարելի չէ հասցնել մինչև 150^0 ըստ Ցելսիուսի: Միջատների մասսայական վոջնչացման համար կարող են գործադրվել ծծմբոտ գազի ողնությամբ գործող ապարատները. այդ գազը ծծումբ այրելով է ստացվում:

Շենքերում միջատներին կարելի չէ, բացի այդ, վոջնչացնել պատերը և հատակները կանաչ սապոնով լվանալով, խառնելով միջիշ կարբոլաթթու, լիզոլ, կերոսին, նավթ կամ ձյութ:

Վոջիլների դեմ պայքարելիս, հարկավոր է փորձել ձեռքի տակ յեղած բոլոր միջոցները. Հարկավոր է նաև գործադրել վոջիլներից պահպանող միջոցները, վորովհետև հարկավոր է վախենալ վոջ միայն վոջլոտությունից, այլ նույնիսկ և մի վոջիլից, վորովհետև հենց նա կարող է վարակված լինել տիֆով: Վոջիլների հարձակումից պահպանվելու համար լավ է զգեստը սրսկել այնպիսի նյութով, վորն ունենար վոջիլների համար անախորժ հոտ և նրանց յետքեր: Վաղուցիվեր գործածվող այդպիսի միջոցներից մեկն է ձյութը:



Նկ. 9. Գլխի վոջիլի անիծը մազի վրա: Շատ խոշորացրած:

Հայտնի յի, վոր հումակները (գյուղացի սալապանները) առաջիկա ժամանակները միշտ գնում եյին իրենց յեղներով Ուկրայնայից Ջրիմ և Աստրախան ձուկ և աղ բերելու համար: Իսկ վորվհետև այդ տեղերում ժանտախտը, ծաղիկը և տիֆերը յերբեք չեյին անհետանում, հումակները միշտ այդ հիվանդություններով վարակվելու մեծ վտանգին եյին յենթարկվում, և իրենց պահպանելու համար ձյութով եյին ծծեցնում վոչ միայն իրենց վերին հագուստը և կոշիկները, այլ և սպիտակեղենը: Այդ միջոցը, յետ քշելով վոշիլներին, նրանց պահպանում եր տիֆով, ժանտախտով և ծաղիկով վարակվելուց: Սպիտակեղենը շատ չկեղտոտելու համար—ամենից լավ և միայն նրա վրա ձյութ սրսկել կամ յեփ տալ ձյութախառն ջրի մեջ: Այդ նպատակով հետևյալն են անում. կաթսայի մեջ ածում են մի վեդրո ջուր, յերկու ֆունտ ձյութ և 1—2 գդալ ուտիչ կալաքար, և յերբ ջուրը յեռ կգա, մեջը գցում են սպիտակեղենը և մի ժամ այդ սպիտակեղենը յեռ են տալիս: Այնուհետև սպիտակեղենը քամում են, չորացնում և գլանում, բայց վոչ հարթուկում: Նրանք, վորոնք հագնում են այդ սպիտակեղենը, շատ գոհ են մնում, վորովհետև նրա վրա վոշիլներ չեն յերևում առնվազն 2 շաբաթվա ընթացքում: Վոշիլներից շատ լավ կարելի յի պահպանվել այն դեպքում, յեթե սպիտակեղենը ծծեցնենք կարբոլա-կերոսինային կանաչ հեղուկ սապոնի լուծվածքով: Կարբոլա-կերոսինային կանաչ սապոնը գործ և ածվում հետևյալ կերպ: Վերին հագուստը պետք և ուշադիր կերպով սրբել կարբոլա-կերոսինային կանաչ հեղուկ սապոնի 20%-10% լուծվածքի մեջ թաց արած խողանակով, մաշակայով կամ, վերջապես, ուղղակի փալասի կտորով, բոլոր կարերին և ծաղքերին և վոշիլների ու անիծների գլուխներով երկու բոլոր տեղերին: Իրանից հետո սպիտակեղենը պետք և գցել այդ լուծվածքի մեջ, քամել և ապա չորացնելուց հետո կարելի յի հագնել: Կարբոլա-կերոսինային կանաչ սապոնի 10% լուծվածք ստանալու համար հարկավոր և այդ խառնուրդի յերեք ֆունտը լուծել 1 վեդրո ջրի մեջ: Կարբոլա-կերոսինային կանաչ հեղուկ սապոնը վոչ միայն սպանում

և վոշիլներին և անիծներին, այլ և պահպանում և սպիտակեղենը նոր վոշիլներ մտնելուց, վորովհետև վերոհիշյալ լուծվածքով ծծեցրած սպիտակեղենը և զգեստը պարածում են վոշիլներին համար անախորժ հոտ: Չորացնելուց հետո զգեստից վոշիլներին կարելի յի դուրս հանել խողանակով կամ զգեստը թափ տալով: Կարբոլա-կերոսինային կանաչ հեղուկ սապոնի հոտը պահպանվում և հագուստի և սպիտակեղենի մեջ մի քանի շաբաթվա ընթացքում, այնպես վոր հիշյալ լուծվածքը սպիտակեղենի և զգեստի մեջ ծծեցնելը բավական յերկար ժամանակ հնարավորություն և տալիս պահպանվելու վոշիլներից:

Կերոսինի և նավթի հոտը նույնպես շատ ազդեցիկ և վոշիլներին դեմ և այդ պատճառով նրանք կարող են լիովին գործադրվել սպիտակեղենը ծծեցնելու համար ձյութի և կարբոլա-կերոսինային կանաչ հեղուկ սապոնի փոխարեն: Կերոսինը հեշտությամբ թափանցում և կտորեղենի մեջ և նրա հոտը բավական յերկար պահպանվում ե: Հարկավոր և միփիչ նավթ կամ կերոսին սրսկել շապիկի և փոխանի վրա, և ապա քամել սպիտակեղենը, ողափոխել և հետո հագնել: Յերբ սպիտակեղենը կկորցնի հոտը, հարկավոր և նորից սրսկել: Ամբողջ սպիտակեղենը ծծեցնելու փոխարեն կարելի յի սահմանափակվել հագուստի միայն այն մասերով, վորոնք մուտքի դեր են խաղում վոշիլների համար, վորոնց միջոցով նրանք մոտենում են մարմնին և սպիտակեղենին, իսկ այդ տեսակի մուտքերի դեր են խաղում շապիկի ոձիքը և բոլորքը, շալվարի գոտին և սապոգների յեղերքը, այսինքն այն մասերը, վորոնց միջոցով վոշիլները ամենից հաճախ մոտենում են սպիտակեղենին և մարմնին:

Բայց վոշիլների դեմ պայքարելիս ամենագլխավոր միջոցն և խստիվ մաքրություն պահպանելը (բաշնիք, վաննաներ, լվացվելը, մաղեր խուզելը, սպիտակեղենի փոխելը և լվանալը), վոշիլներին վոչնչացնելը իրերի վրայից ապավարակիչ կամեբանների միջոցով և շենքերը ամենատուշադիր կերպով միջատներից ազատելը:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

	Եջ
Վարակիչ հիվանդությունները և խնչպես են նրանք տարածվում	3
Ճանճերը, վորպես վարակիչ հիվանդություններ տարածողներ, և նրանց դեմ պայքարելու միջոցները:	6
Մոծակները, վորպես մալյարիա տարածողներ, և նրանց դեմ պայքարելու միջոցները:	21
Լվերը և փայտոջիլները, վորպես վարակիչ հիվանդություններ տարածողներ, և նրանց դեմ պայքարելու միջոցները:	28
Վոջիլները, վորպես վարակիչ հիվանդություններ տարածողներ, և նրանց դեմ պայքարելու միջոցները	34

<< Ազգային գրադարան



NL0267421

20 400.

4917
Цена 20 коп

Н. П. 2.



Проф. Д. РОССИЙСКИЙ
Насекомые — распро-
странители заразных бо-
лезней и борьба с ними
(Перевод с русского)

На армянском языке

ЦЕНТРАЛЬНОЕ ИЗДАТЕЛЬСТВО НАРОДОВ СССР.
Москва, центр, Никольская, 10.